ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
8	անջրանցիկ հագուստ	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	Անջրանցիկ քողարկող համազգեստ՝ կոմբինեզոն (սպիտակ) (մեկ հատը՝ բաճկոն, տաբատ և պատյան) Արտադրվում է սպիտակ, կամ սպիտակի վրա սև կամ մոխրագույն պուտերով, անջրաթափանց սինթետիկ գործվածքից կամ ներսի կողմից պոլիուրետանի ծածկույթով, գործվածքի մակերեսային խտությունը՝ 120-140 գրամ: Բաղկացած է անջրանցիկ գլխանոցով բաճկոնից և տաբատից, որոնք տեղադրված են նույն կտորից պատրաստված պատյանի մեջ: Բաճկոնը մշակված է առաջամասից և թիկունքամասից, լայն, ուղիղ ձևվածքով, աջ և ձախ կողմերից արված են 35-38սմ-անոց շեղ բացվածքներ, որոնք կիպ փակվում են ինքնակպչուն ժապավեններով կարված կափույրներով : Լայն ձևվածքով թևքերը դաստակի հատվածում նեղանում են և ունեն ռետինային ծալվածքներ: Բաճկոնի և գլխանոցի միացման կարերը, թևերի և կափույրների կարերը մշակվում են փակ զույգ կարով: Գլխանոցը՝ երեսամասից , վզի հատվածը և բաճկոնի ստորին հատվածը կարգավորվում են ծալվածքի մեջով անցկացված քուղերով, որոնց ծայրերին ամրացված են չափսի

			զսպանակային կարգավորիչներ: Տաբատը ուղիղ ձևվածքով է, ունի թեք աջ և ձախ գրպանային ճեղքեր (24-26սմ), որոնք կիպ փակվում են ինքնակպչուն ժապավեններով կարված կափույրներով: Լայն ձևվածքով տաբատը ստորին հատվածում նեղանում է և ունի ռետինային կարգավորվող ծալվածքներ: Պահպանման ու տեղափոխման համար յուրաքանչյուր անձրևանոց համալրված է անհատական, նույն գործվածքից պատրաստված պատյանով, որը փակվում է ծալվածքի մեջով անցկացված քուղով, քուղերի ծայրին ամրանում է պոլիմերային գնդիկներ, ամրակներ: Պատյանի վրա ամրանում է երկու հատ մոլլե համակարգի չափանիշներով կարված ժապավեններ, որոնցից յուրաքանչյուրը կոճկվում է մեկ կոճգամով: Արտադրվում է Պատվիրատույի կողմից ներկայացված նմուշի չափորոշիչներին և ձևին համապատասխան , 42/2-ից 66/6 չափս-հասակի: Պիտակավորումը: Բաճկոնի ներսից ստորին ձախ հատվածում և տաբատիգոտու ներսի մասին պետք է կարված լինի պիտակ: Պիտակի վրա նշված՝ տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, պայմանագրի կոդը, արտադրման տարեթիվը : Բաճկոնի դիմացի հատվածում պետք է կախված լինի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 30-50 հատ: Պարկերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, պայմանագրի կոդը, արտադրողը, արտադրման ամիսն ու տարեթիվը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
8			